# ԵԹԵ ՀԱՐՑԻՆ ՄՈՏԵՆԱՆՔ ԳԻՏԱԿԱՆՈՐԵՆ

Եթե ընդդիմախոսները ցանկանան հեղինակին հանդիմանել. աշխատությունում՝ մեթոդաբանության և գիտական մոտեցման բացակայության պատրվակով, ապա՝ կփորձեմ նրանց հուսախաբ անել: Հարցը կայանում է նրանում, որ՝ գիրքը ընթերցողներին ծանոթացնում է հետազոտությունների արդյունքներին, այլ ոչ մեթոդներին, ալգորիթմներին և որոնման տեխնիկային (արվեստին): Հեղինակը հաճույքով կքննարկի մասնագետների հետ՝ ովքեր ծանոթ են մոդելավորման և տեղեկատվության տեսությանը, գործառնական տեղային հոգեբանական գործունեության (ԳՏՀԳ) ձևավորմանը, նշանային համակարգերի տեսությանը, մտածողության գործընթացի համակարգային վերլուծությանը, ինչպես նաև համակարգային կազմակերպության գոլոգրաֆիկական սկզբունքով գերակշռող մոտիվացիաների էությունը:

Սակայն սա առանձին քննարկման առարկա է: Անշուշտ, մտածողական խնդիրների լուծման համար, գաղափարագրերի մոդելների և տեխնիկայի կիրառումը, հնարավոր է, որը և ոչ մասնագետները կառաջարկեն միանգամայն «անհավանական» և ոչ ավելի նվազ «երևակայական», այդ թվում, զանազան հասկացությունների ստուգաբանական մեկնաբանությունները, այս կամ այն գործողությունների անվանումները: Սակայն, հետազոտությունների ընթացքում գլխավորը՝ բազմաթիվ տարբերակներից ընտրել այն մեկը, որը համապատասխանում է համակարգը ձևավորող գործոնին, չի հակասում տարբերակների համակարգային մոտեցմանը, միաժամանակ լեզվին և մտածողությանը: Մենք պետք է հիմք ընդունենք այն, որ մտածողության և լեզվի վերլուծության միավորը համարվում է խոսքը: Միավորի տակ նկատի է առնվում վերլուծության այնպիսի արդյունք, որը ի տարբերություն տարրերի, տիրապետում է բոլոր հիմնական հատկություններին, հատուկ է ամբողջությանը, և որը այնուհետև հանդիսանում է այդ միավորի չտարրալուծված կենդանի մասը՝ այդ թվում և զարգացման ընթացքում:

Մարդու՝ զարգացած լեզվային համակարգը իրենից ներկայացնում է լեզվային պայմանական նշանների համակարգ, որը ցույց է տալիս առարկաներ, հատկություններ, գործողություն, հարաբերություն: Ընդ որում՝ Ա. Ռ. Լուրիան (Լեզու և գիտակցություն, Մ., ՄՊՀ, 1979. Նեյրոլինգվիստիկայի գլխավոր պրոբլեմները. Մ., ՄՊՀ, 1975.) համարում է, որ «բառերի ստեղծումը, որոնք ունեն խոսակցական /լեզվական, ծրագրաբանական, մաթեմատիկական և այլն/ օպերատորների մոդելավորման նշանակություն՝ մարդու ԳՏՀԳ ձևավորման ճանապարհով, թույլ է տալիս նրան մոդելավորել իրականությունը իր գիտակցության մեջ, ծրագրաբանորեն վերափոխել տեղեկատվությունը, կառավարել իր և ուրիշների գործողությունները, զարգացնել մշակույթը, գիտությունը, տեխնիկան, արվեստը, կազմակերպել ճանաչողության, ուսմունքի և ուսանելու գործընթացը, որը հանդիսանում է մարդկային պատմության մեծագույն հայտնագործությունը, անհամեմատ ավելի կարևոր, քան՝ նոմինատորների խոսքերի ստեղծումը (անվանումներ, հատկությունների նշանակությունը, դերբայական ձևերը և այլն):

Այնուամենայնիվ հեղինակի հակասող մոտեցումների համար կառաջարկեի երկու օրինակ՝ ինչպես վերացական փիլիսոփայական տերմին՝ «ճշմարտությունը», որը ցույց է տալիս մեր գիտելիքների համապատասխանելիությունը իրականությանը, առաջացել է ավելի պակաս նշակության՝ «կա», այսինքն՝ գոյություն ունենալ, լինել իրականության մեջ (Լ. Վ. Շչերբա), ինչպես նաև «հասկացություն» բառը, որը հասարակության զարգացման վաղ

ընթացաշրջանում նշանակում էր ֆիզիկական գործողություն, իրագործվում էր ձեռքերով՝ բռնել, վերցնել: Այնուհետև մտածողության և խոսքի զարգացման չափով, այդ բառը՝ մտքից կառչելով, սկսեց ցույց տալ ինչ-որ հարաբերություններ իրականության առարկաների և երևույթների միջև: Հետագայում «հասկացություն» բառը սկսեց արտահայտել ոչ միայն հենց մտավոր գործունեության գործընթացը, ըմբռնումը, այլ նաև այդ մտավոր գործընթացի արդյունքը՝ իմաստաբանական պատկերը, որն արտացոլում է առարկաները և երևույթները իրենց հատկանիշներով: (Մտածողության գործընթացների համակարգային վերլուծությունը: Կ. Վ. Սուդակովի խմբ., Մ., ՍՍՀՄ ԲԳԱ, 1989.):

Այսպիսով, եթե լեզուն՝ համակարգ է, ապա խոսքը հանդիսանում է մտածողության և խոսունակության վերլուծության միավոր: Սրա հետ էլ կապված, հեղինակը դիտարկում է «քար» բառը, հատկապես, ինչպես մոդելավորման օպերատոր, Հայկական լեռնաշխարհի բնիկների խոսակցական մոդելավորման սկզբնական էվոլյուցիայի համակարգի ձևավորման «միավոր» և ինչպես՝ նախագծման կամ իրականության /մտքեր և գործողություններ/ գործիք: Եվ քանի որ հաջողվեց փորձել ցույց տալ, որ այդ միավորը մնում է տարբերակների ձևով տարբեր լեզվական խմբերում և համակարգերում՝ ուստի դատողությունները թողնենք հարցասեր ընթերցողին:

խոսքը Աստծունն էր,<br>
և խոսքը եղել է...»<br>
կամ՝<br>
/«Ի սկզբանէ էր բանն,<br>
բանն էր առ Աստուածն...»/

Նախորդ Հաջորդ

Բովանդակություն

Քաղաքակրթության քարե պարեգրությունը

© ArcaLer